**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ՍՄԹ-ԳՀԱՊՁԲ-21/02 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **02.06.2021թ.**

28.06.2021թ.-02.06.2021թ. ժամը 11:00-ին ՀՀ, ք. Երևան, Հակոբյան փող., 3 շենք, գրասենյակ 315 հասցեում գտնվող «ՍԱՅՄՈԹԵՔ» ՍՊԸ-ի շենքում տեղի ունեցավ ապրանքների ձեռքբերման ՍՄԹ-ԳՀԱՊՁԲ-21/02 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Էդգար Սարգսյան | «ՍԱՅՄՈԹԵՔ» ՍՊԸ-ի ճարտարագետ, |
| Նարեկ Մանուկյան | «ՍԱՅՄՈԹԵՔ» ՍՊԸ-ի ճարտարագետ, |
| Ալեն Խալաթյան | «ՍԱՅՄՈԹԵՔ» ՍՊԸ-ի ճարտարագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Էդգար Սարգսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վարուժան Էլոյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, և Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բավարար թվով անդամներ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (Այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և իրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28.06.2021թ. ժամը 11:00-ին ՀՀ, ք. Երևան, Հակոբյան փող., 3 շենք, գրասենյակ 315 հասցեում գտնվող «ՍԱՅՄՈԹԵՔ» ՍՊԸ-ի շենքում Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված պայմանագրի կատարման առավելագույն ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Թվային ծրագրային կառավարմամբ (ԹԾԿ) շաղափային հաստոց | 2890000 |
| 2 | Եռաչափ տպիչ | 890000 |
| 3 | Օսցիլոգրաֆ | 430000 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «Միկրորինգ» ՍՊԸ | ՀՎՀՀ 00824922, Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող.33/63, Հեռ. 010529421,010529422, էլ. Հասցե՝ info@microring.am |
| 2 | «Լեմուր» ՍՊԸ | ՀՎՀՀ 00899289, Գործունեության հասցե՝ ք. Երևան, Ա. Տիգրանյան 5/12 բն. 20,Հեռ. 098042913, էլ. Հասցե LLclemur@gmail.com |
| 3 | «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ» | ՀՎՀՀ 00871206, Գործունեության հասցե՝ ք. Երևան, Մանթաշյան 12-17, Հեռ. 060430430, էլ. Հասցե՝ info@prime.am |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | ընդհանուր գինը |
| 1 | Թվային ծրագրային կառավարմամբ (ԹԾԿ) շաղափային հաստոց | «Լեմուր» ՍՊԸ | 2890000 | 12000000 | 0 | 12000000 |
| | | «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ» | | 2100000 | 420000 | 2520000 |
| 2 | Եռաչափ տպիչ | «Միկրորինգ» ՍՊԸ | 890000 | 707500 | 141500 | 849000 |
| | | «Լեմուր» ՍՊԸ | | 876000 | 0 | 876000 |
| | | «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ» | | 900000 | 180000 | 1080000 |
| 3* | Օսցիլոգրաֆ | «Լեմուր» ՍՊԸ | 430000 | 677000 | 0 | 677000 |
| | | «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ» | | 450000 | 90000 | 540000 |

*Հրավիրվել են բանակցություններ, որոնց արդյունքները ներկայացվում են ստորև.

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Միկրոռինգ» ՍՊԸ | բավարար |
| 2 | «Լեմուր» ՍՊԸ | բավարար |
| 3 | «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ» | բավարար |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հաշվի առնելով, որ 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկները գերազանցում են տվյալ գնման առարկայի ձեռքբերման համար գնման հայտով սահմանված նախահաշվային գինը, Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ տվյալ չափաբաժնի մասով բավարար գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

2. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 2021թ. Հուլիսի 2-ին ժամը 11:00-ին, ՀՀ, ք. Երևան, Հակոբյան փող., 3 շենք, գրասենյակ 315 հասցեում գտնվող «ՍԱՅՄՈԹԵՔ» ՍՊԸ-ի շենքում

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակիցներից ներկա էր միայն «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ»-ն, որը ներկայացրերեց նոր նվազեցված գնային առաջարկ, համապատասխանաբար՝

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված նոր նվազեցված/վերջնական գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | |
|---|---|---|---|---|
| N | Անվանում | | Գինը, առանց ԱԱՀ | Գինը, ներառյալ ԱԱՀ |
| 3 | Օսցիլոգրաֆ | «Լեմուր» ՍՊԸ | - | - |
| | | «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ» | 358333,33 | 430000 |

Այլ առաջարկներ չեն ներկայացվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 2 | «Լեմուր» ՍՊԸ | | 12000000 |
| | 1 | «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ» | X | 2100000 |
| 2 | 1 | «Միկրորինգ» ՍՊԸ | X | 707500 |
| | 2 | «Լեմուր» ՍՊԸ | | 876000 |
| | 3 | «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ» | | 900000 |
| 3 | 2 | «Լեմուր» ՍՊԸ | | 677000 |
| | 1 | «Փրայմ Լոջիստիկ Սերվիսիզ ՍՊԸ» | X | 358333,33 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. Անգործության ժամկետ չսահմանել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Էդգար Սարգսյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Նարեկ Մանուկյան

Ալեն Խալաթյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վարուժան Էլոյան